ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 31 >> հոկտեմբեր 2018թ. N-111
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. հոկտեմբերի 18-ի թիվ 1171-Ա որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Ջորավար Վարդանի փող., 12/1 հասցեում գտնվող 1 հեկտար մակերեսով (կադաստրային ծածկագիրը 10-001-0135-0081) և 12,420,000 դրամ կադաստրային արժեքով հողամասը որպես նվիրատվություն ընդունելու և որպես պետական սեփականություն Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանին ամրացնելու համար :

2. Հանձնարարել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի միջոցների հաշվին:

3. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

4. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2018թ. հոկտեմբերի 31-ի թիվ 111
կարգադրության

Որպես նվիրատվություն հողամաս ընդունելու հանձնման և ընդունման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծված հանձնաժողովի անհատական կազմը

1. *Տրդատ Սարգսյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետ (հանձնաժողովի նախագահ),*
2. *Կամո Սահակյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար,*
3. *Անահիտ Սարգսյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (հանձնաժողովի անդամ),*
4. *Մեսրոպ Մեսրոպյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ (հանձնաժողովի անդամ),*
5. *Դավիթ Հարությունյան (համաձայնությամբ) – Եղեգնաձորի քաղաքապետ (հանձնաժողովի անդամ),*
6. *Արմեն Աղաջանյան (համաձայնությամբ) - Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-գլխավոր ճարտարապետ (հանձնաժողովի անդամ):*

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ ***Կ. Սահակյան***